Անվտանգության եվ գաղտնիության կանոններ

1. Հաճախորդը պարտավոր է խստորեն պահպանել Մոբայլ-բանկինգ ծրագիր մուտք գործելու օգտանունի, գաղտնաբառի և այլ նույնականացման տվյալների գաղտնիությունը՝ կանխելու համար ապօրինի մուտքի, իր տվյալների և միջոցների օգտագործման հնարավորությունը:
2. Հաճախորդի նույնականացումն իրականացնում է գաղտնաբառի, օգտանունի, նույնականացման ունիկալ կոդի և նույնականացման այլ տվյալների մուտքագրմամբ:

- Հաճախորդը համաձայնվում է, որ Մոբայլ-բանկինգ համակարգից օգտվելիս վերջինիս հաշվով կատարվող հարցումները կատարվում են Հաճախորդի կողմից իր կամահայտնությամբ կամ գիտությամբ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

3. Նույնականացման ունիկալ կոդի մուտքագրումն ունի բնօրինակ ստորագրման հավասարազոր իրավական ուժ և դրա մուտքագրումը հիմք է Բանկի համար՝ Մոբայլ-բանկինգ ծրագրում հրահանգներով տրված ֆինանսական գործարքների իրականացման համար:
4. Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել փոխել գաղտնաբառը, եթե առաջացել է գաղտնաբառի հրապարակման վտանգ կամ այն արդեն հրապարակվել կամ այլ կերպ հայտնի է դարձել այլ անձանց:
5. Օգտանունը և գաղտնաբառը Հաճախորդին հանձնելու պահից դրանց անվտանգ և գաղտնի պահպանության պատասխանատվությունը ստանձնում է Հաճախորդը:
6. Յուրաքանչյուր կողմը պարտավորվում է առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության Պայմանագրի հետ չկապված նպատակներով չօգտագործել և որևէ երրորդ անձի չհաղորդել, բացառությամբ ստորև նշվածների, Պայմանագրին առնչվող ցանկացած տեղեկություն, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ բանկային, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկատվություն:

7. Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է օգտագործել, հրապարակել կամ այլ կերպ տրամադրել այլ անձանց վերոնշյալ տեղեկությունները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե

- տեղեկատվությունն օգտագործվում է Կողմերի կողմից՝ Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու նպատակով, կամ
- տեղեկատվությունը ստացված է պաշտոնական և(կամ) այլ բաց աղբյուրներից, կամ,
- այն գործող ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսած դեպքերում, կարգով և ծավալով ներկայացվում է պետական իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց: